ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 606-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2011.05.25/29(832) Հոդ.709	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	05.05.2011
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	17.05.2011
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	25.11.2011	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1925-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մայիսի 2011 թվականի N 606-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1925-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշման հավելվածի՝

1) 4-րդ կետում՝

ա. «վերականգնված կաթ» բառերից հետո լրացնել «(կաթնային ըմպելիք)» բառերով.

բ. «վերականգնված կաթ» հասկացությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հասկացություն.

«վերականգնված կաթ՝ հարստացված (կաթնային ըմպելիք՝ հարստացված)՝ վերականգնված կաթ (կաթնամթերք, կաթ պարունակող մթերք), որին լրացուցիչ, առանձին կամ համակցված ավելացվել են սպիտակուց, վիտամիններ, միկրոտարրեր և մակրոտարրեր, պրոբիոտիկ կուլտուրաներ, պրեբիոտիկ նյութեր, սննդային հյուսվածքներ, բազմաչհագեցած ճարպաթթուներ և ֆոսֆոլիպիդներ.».

2) 38-րդ կետի «ա» ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կաթի և կաթնամթերքի անվանումները պետք է համապատասխանեն սույն կանոնակարգի 4-րդ կետի հասկացությունների անվանումներին.».

3) 40-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 40.1-ին կետով.

«40.1. Եթե կաթը կամ կաթնամթերքն արտադրվել է ոչ թե կովի, այլ ուրիշ կենդանու կաթից, ապա մականշվածքում պետք է այդ մասին նշվի.».

4) 72-րդ կետի «ա» և «բ» ենթակետերն ուժը կորցրած ճանաչել.

5) 72-րդ կետի «գ» կետը «փորձաքննություն և» բառերից հետո լրացնել «կաթի ու» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011 թ. մայիսի 17
Երևան